

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և
Թուրքմենստանի Հանրապետության կառավարության միջև
բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության
մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և
Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով բարձրագույն կրթության և գիտության ոլորտում
իրավահավասար համագործակցության փոխադարձաբար
շահագրգռվածությունը,

ճանաչելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում
ամրագրված համամարդկային արժեքների գերակայությունը իրենց
փոխհարաբերություններում և իրականացվող կրթական
քաղաքականության մեջ,

դիտելով ձևավորված պետական համակարգերը որպես երկու
պետությունների ժողովուրդների ազգային-մշակութային լիարժեք
զարգացման անհրաժեշտ պայման,

ձգտելով կրթության ազգային համակարգերի բովանդակության
նորացմանը՝ մարդասիրության և մշակույթների երկխոսության հիման վրա,
դրսևորելով գիտական, կազմակերպամեթոդական, արտադրական և
այլ համագործակցության պատրաստակամություն,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերն ընդունում են պետություններից յուրաքանչյուրի
քաղաքականության անկախությունը բարձրագույն կրթության և
գիտության բնագավառում՝ իրենց տարածքներում գտնվող բոլոր
ուսումնական հաստատությունների, գիտական կազմակերպությունների և
հիմնարկների նկատմամբ:

Հոդված 2

1. Կողմերը հաստատում են իրենց կրթական ազգային
համակարգերի մեջ մտնող պետական բարձրագույն ուսումնական
հաստատությունների իրավահավասարությունը՝ անկախ ուսուցման
լեզվից, և նրանց նկատմամբ ցուցաբերում պետական, կազմակերպական,
մանկավարժական, ուսումնամեթոդական և նյութաֆինանսական

աջակցություն ընդհանուր հիմունքներով, որոնք սահմանվում են Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությամբ:

2. Կողմերը, նկատի ունենալով համագործակցության հետագա զարգացումը, կուսումնասիրեն համալսարանների և այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների վկայագրերի և գիտական աստիճանների փոխադարձաբար ճանաչման հարցերը՝ դրանց համարժեքության մասին համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

Հոդված 3

Կողմերից մեկի տարածքում մշտապես բնակվող և մյուս Կողմի քաղաքացիություն ունեցող անձինք իրավունք ունեն այդ տարածքում ստանալ բարձրագույն կրթություն՝ բոլոր մակարդակներով, ինչպես նաև գիտական աստիճաններ և կոչումներ՝ այն պայմաններով, որոնք սահմանված են տվյալ պետության քաղաքացիների համար, որի տարածքում նրանք մշտապես բնակվում են:

Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է պահպանել մյուս Կողմի պետության այն քաղաքացիների ուսուցումը շարունակելու հնարավորությունը /մինչև ավարտելը/, որոնք ուսման են ընդունվել մինչև 1992թ. հունվարի 1-ը և սովորում են բարձրագույն դպրոցի և հետբուհական կրթական ուսումնական հաստատություններում՝ ընդունող Կողմի քաղաքացիների նկատմամբ գործող պայմաններով:

Հոդված 5

1. Կողմերից յուրաքանչյուրը համաձայնում է մյուս Կողմի քաղաքացիներին իր բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունել՝ ըստ նրա ուղեգրի: Ուսումնառության գործուղված անձանց թվաքանակը, նրանց ընդունման և ֆինանսավորման կարգը որոշվում են բարձրագույն դպրոցի կառավարման համապատասխան մարմինների միջև՝ երկկողմ համաձայնագրով:

2. Կողմերը չեն խոչընդոտում մյուս Կողմի քաղաքացիների՝ իրենց բարձրագույն ուսումնական հաստատություններ անհատապես ընդունվելուն՝ յուրաքանչյուր պետությունում գործող ընդունելության կարգին համաձայն:

Հոդված 6

Կողմերն իրենց բարձրագույն ուսումնական հաստատություններում պայմաններ են ստեղծում այն կրթական հիմնարկների համար մանկավարժական և գիտամանկավարժական կադրեր պատրաստելու նպատակով, որոնցում դասավանդումը կատարվում է մյուս Կողմի պետական լեզվով: Կողմերից յուրաքանչյուրն աջակցում է գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը՝ մյուս Կողմի այն ուսումնական հաստատությունների ուսումնամեթոդական գրականությամբ ապահովմամբ, որտեղ դասավանդումը կատարվում է իր պետության լեզվով:

Հոդված 7

1. Կողմերն աջակցում են բարձրագույն ուսումնական հաստատությունների և բարձրագույն դպրոցի գիտական կազմակերպությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը, գիտական տեղեկության ստացմանը և փոխանակմանը, բարձրագույն կրթության բնագավառում համատեղ գիտական ծրագրերի մշակմանը, ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպման ոլորտում շփումների հաստատմանը և ընդլայնմանը, ուսանողների և մանկավարժների զբոսաշրջային-էքսկուրսիոն գործունեությանը, դասախոսություններ կարդալու և գիտական աշխատանք ղեկավարելու համար մասնագետների հրավիրմանը:

2. Կողմերը կզարգացնեն ուսումնամեթոդական և գիտական փորձի փոխանակումը, կակտիվացնեն համագործակցությունը կրթության որակի կառավարման բնագավառում:

3. Կողմերը կտեղեկացնեն միմյանց իրենց կրթական համակարգերում փոփոխությունների, կադրերի պատրաստման մակարդակին ներկայացվող պետական չափանիշների և պահանջների փոփոխությունների մասին:

Հոդված 8

Կողմերը միջազգային համագործակցության վերաբերյալ տեղեկություն են փոխանակում, որը կարող է հետաքրքրել մյուս Կողմին, նպաստում են միջազգային ծրագրերի ու նախագծերի մշակմանը և իրականացմանը համատեղ մասնակցելու նպատակով մասնագետների խմբերի ստեղծմանը: Այդ փոխհարաբերությունները սահմանվում են լրացուցիչ՝ բազմակողմ արձանագրություններով կամ համաձայնագրերով:

Հոդված 9

Կողմերը գիտամանկավարժական կադրերի պետական ատեստավորման իրենց մարմիններին թույլատրում են փոխհատուցմամբ կատարել մյուս Կողմի քաղաքացիների գործերով ատեստավորում:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով:

Կատարված է Աշգարատ քաղաքում 1993 թվականի օգոստոսի 24-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի օգոստոսի 24-ից: